# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Աշակերտների ակտիվ ներգրավվածությունը դասապրոցեսին համագործակցային մեթոդի միջոցով

Առարկա՝ Պատմություն

Դասարան՝ 9-րդ

Կատարող՝ Տարոն Խաչատրյան

Ղեկավար՝ Նարինե Վասիլյան

# ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն

2. Գրականության ակնարկ

3. Գործնական համատեքս

4. Տվյալների հավաքագրում

5. Եզրակացություն

6. Գրականության ցանկ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կրթության նպատակներից մեկը կայանում է նրանում, որ ապագա սերնդին պետք է փոխանցել այն գաղափարը, որ նրանք կարող են փոխել իրենց շրջապատող աշխարհը: Դրա համար մենք նրանց գիտելիքներ և հմտություններ ենք փոխանցում: Չինական իմաստությունն ասում է. «Ասա ինձ, և ես կմոռանամ: Ցույց տուր՝ ես կհիշեմ: Թույլ տուր ինքս գործեմ, և ես կսովորեմ»: Գրեթե բոլոր ուսուցիչներն այսօր վերակառուցել են իրենց աշխատանքը և անցել տարբեր արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմամբ աշխատանքի նոր ձևերի: Ինչ տեխնոլոգիական հնարք էլ որ կիրառի ուսուցիչը դասի ժամանակ, արդյունքը պետք է լինի մեկը՝ աշակերտի ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու և դրանք կիրառելու հմտության ձևավորում, այսինքն մենք պետք է սովորեցնենք երեխաներին սովորել: Որպեսզի սովորողների գիտելիքներն իրենց սեփական որոնումների արդյունքը լինեն, անհրաժեշտ է կազմակերպել այդ որոնումները, կառավարել աշակերտներին, զարգացնել նրանց ճանաչողական գործունեությունը:

# ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱՊՐՈՑԵՍԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ՄԻՋՈՑՈՎ

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Կրթության տեսության ոլորտում վերջերս կատարված մի շարք ուսումնասիրություններ նվիրված են ուսումնառողների մոտ նկատվող ճանաչողական ոճերի միջև տարբերություններին: Ուսուցիչների մեծամասնությունը համոզված է , որ եթե դասերը կառուցվեն , հաշվի առնելով ուսանողների ընկալման և ճանաչման տարբեր ոճերով բնութագրվող կարիքները, ավելի դրական տեղաշարժ կստեղծվի , և, հետևաբար, կբարձրանան արդյունքները: Ճանաչողության տարբեր ոճերով աշակերտները տարբեր կերպ են արձագանքում ուսուցման տարբեր մեթոդներին: Ուսուցման ոճերը , հավանաբար, կենսաբանական գործոնների և անձնական զարգացման հետ կապված գործոնների հետևանք են: Ուսուցման ոճերը որոշակի աշակերտների համար արդյունավետ են դարձնում ուսուցման հատուկ մեթոդ, որն անարդյունավետ է մյուս սովորողների համար: Որոշ աշակերտներ ավելի լավ են ընկալում առաջին հերթին կոնկրետ փաստերն ու տվյալները, մյուսները նպատակաուղղված են տեսությունների և մաթեմատիկական մոդելների առաջնահերթ ընկալման վրա: Պատկերային մտածողություն կրողները գերադասում են սխեմատիկ կամ պատկերազարդ տեղեկություն ստանալ, մյուսների համար ավելի արդյունավետ է լսելը՝ խոսքային մտածողության կրողները հաճույքով սովորում են բառերի միջոցով: Պրագմատիկները գերադասում են սովորել, անմիջապես գործածելով նոր գիտելիքները: Ամբողջական մտածողություն կրողները ձգտում են ընդհանուր պատկերացում կազմել սովորելու ենթական նյութի վերաբերյալ՝ նախքան մանրամասներին անցնելը: Վերլուծական մտածողություն կրողները ձգտում են փորձել նախ հասկանալ մանրամասները, հետո դրանք դիտարկել ավելի մեծ պատկերի համատեքստում: Բանավեճեր են ընթանում՝ արդյոք անհատի ուսումնառության ոճը հաստատո՞ւն է, թե՞ կարող է զարգանալ ժամանակի ընթացքում: Հոդվածի հեղինակները հիշատակում են Գարդների բազմակի մտածողության տեսությունը, որի համաձայն անհատի ուսումնասիրության ոճը պահպանվում է վերջինիս ուսումնառության բոլոր ոլորտներում: Մի շարք վկայություններ ցույց են տալիս, որ աշակերտների նախընտրած ոճերից փոքր ինչ

տարբերվող դասավանդման ոճն իրականում կարող է օգնել նրանց՝ ընդարձակելով ուսումնառության ոճերի սեփական ցանցը:

Միջանձնային հարաբերությունների առումով որոշ երեխաներին դուր է գալիս սովորել խմբում՝ համատեղ վարժություններ կատարելիս, իսկ ավելի ինքնաճանաչողական աշակերտները նախընտրում են ձեռք բերել գիտելիքները անհատապես: Որպես տարբերակման չափանիշներ կիրառվում են ուսումնառողների սովորելու ունակությունը, նրանց պատրաստվածությունը և ճանաչողական հետաքրքրությունը: Այս հատկանիշներից յուրաքանչյուրը մեծ չափով որոշում է ուսումնառության հաջողությունը: Գերիշխողը պետք է լինի պատրաստվածության մակարդակը, քանի որ դրանից է մեծ չափով կախված սովորելու ունակությունը և ճանաչողական հետաքրքրության տեղեկատվության աստիճանը: Ցանկացած դասի ընթացքում աշակերտի ուսումնառության վրա ազդում է նախորդ դասերի սովորածը: Ազդում է նաև այն թե՛ նրանց ինչպե՞ս են դասավանդել, և թե՛ ինչպես են նրանք արձագանքել դրան: Օրինակ՝ բացակայել են դասերից, դասին՝ տարբեր աստիճանի ուշադրություն են դարձրել, աշխատել են տարբեր գործընկերների հետ: Աշակերտի ձեռքբերուների մեջ ոչինչ բնատուր չէ, ոչ էլ անխուսափելի: Ուղեղի գործառույթի վերաբերյալ վերջին հետազոտությունները հավաստում են, որ ուղեղի սովորելու ունակությունը զարգանում է սովորելու ընթացքում: Ուստի ավելի ճիշտ է դատողություններ անել աշակերտի տվյալ պահին ունեցած կարողությունների մասին նրանց նվաճումների վերաբերյալ: Այս տեսանկյունից «ընդհանուր ունակություններ» կամ «խելացիություն» եզրերով ներկայացվող բնութագիրը խիստ վիճարկելի է: Առավել ընդունելի է՝ միջև տվյալ պահը՝ հաջող ուսումնառություն արձանագրած սովորողին բնութագրել որպես «բարձր առաջադիմություն ունեցող» աշակերտ: Համեմատաբար քիչ տեղեկություններ կան այն մասին, որ ուսումնական որոշակի ոճեր առավել հատուկ են տղաներին, քան աղջիկներին կամ որևէ մշակութային պատկանելություն ունեցող աշակերտներին, քան մյուսներին: Հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտներին առաջարկվում են անհատականացված կրթական ծրագրեր, որտեղ ներկայացվում են հենց այդ անձնավորությանն անհրաժեշտ տարբերակման ռազմավարությունները:

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԳՐԿՈՒՄ Է ԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐ՝ ԴՐԱՆՔ ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱԿՏԻՎ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Մանկավարժների կարևոր նպատակն է օգտագործել ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնք խրախուսում են ուսանողներին ընդլայնել իրենց ֆունկցիոնալությունը ճանաչողության նոր ձևերի միջոցով: Բայց եթե ուսուցիչը օգտագործի միայն այնպիսի մեթոդներ, որոնք ներառում են ուսանողի ճանաչողական ամենաքիչ նախընտրելի եղանակները, ապա նրա անհամարության մակարդակը կարող է այնքան բարձր լինել, որ խանգարի ուսուցմանը: Մյուս կողմից, եթե ուսուցիչն օգտագործում է այնպիսի եղանակներ, որոնք առավել նպաստավոր են միայն մեկ աշակերտի համար, ապա նրա մտածողության ճկունությունը չի կարող զարգանալ իր ներուժի լիարժեք իրացման համար, առանց որի հնարավոր չէ հաջողության հասնել ոչ դպրոցում, ոչ էլ հետագա մասնագիտական գործունեության մեջ: Յուրաքանչյուր նոր մեթոդ, նոր տեխնոլոգիա պետք է մշակել մինչև սահունության աստիճան: Եթե ամեն բան միանգամից սկսել, ապա հնարավոր է կործանել ցանկացած նորարարություն:

Մանկավարժական փորձառույթի ձեռքբերմանը զուգընթաց իմ շփումը աշակերտների հետ ավելի ճկուն է դարձել: Զգտում եմ անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր սովորողի հանդեպ, որոնում և գտնում եմ սեփական հնարքներ, տարիների ընթացքում ավելի համարձակ եմ դարձել մտքերս ու զգացմունքներս արտահայտելու մեջ: Լսելու ու բացատրելու ունակությունը ուսուցչի համար կարևոր հատկանիշ է, բայց դա դեռևս բավարար գործոն չէ ուսուցումն արդյունավետ կազմակերպելու համար:

Շեշտադրելով սովորողների դրական կողմերը և ոչ թե թերությունները, նշելով նրանց աշխատանքների ուժեղ կողմերը, ես խթանում եմ ուսուցիչ-աշակերտ փոխադարձ գործունեությունը և սովորողների հետաքրքրությունը դասավանդվող առարկայի հանդեպ: Դա բերում է կատարված աշխատանքի նկատմամբ

բավարարվածության զգացումին: Աշխատում եմ ժամանակին վերհանել սովորողի կողմից թույլ տված սխալներն ու բացթողումները և նպաստում եմ դրանց արագ ուղղմանը: Այս գործում հիմք եմ ընդունում ծրագրային չափորոշիչները, աշակերտների գիտելիքների որոշակի մակարդակը և ոչ թե միջինացված ստանդարտները: Հնարավորություն եմ ընձեռում աշակերտներին քննարկել մեկը մյուսի աշխատանքները, ինչի շնորհիվ նրանք իրականացնում են իրենց հետադարձ կապը:

Ուսուցիչները պետք է հավատան, որ իրենց ունակություններով կարող են ազդել ուսանողի կյանքի վրա: Նրանց աշխատանքն առավել արդյունավետ կլինի, եթե հիմնվի հետևյալ գաղափարների վրա.

- ուսումնառողներն ու ուսուցումը ամենակարևորն է;
- ուսումնառությունը ոչ թե ընտրյալների արտոնությունն է, այլ բոլորի իրավունքը;
- յուրաքանչյուր ոք պետք է ունենա հավասար հնարավորություններ:

Բայց ինչպե՞ս կարելի է այդ արժեքները գործնականում կիրառել: Նախևառաջ պետք է յուրաքանչյուր աշակերտի մեջ տեսնել անհատականություն: Մենք պետք է հասկանանք յուրաքանչյուր աշակերտի առանձնահատկությունները և հաշվի առնենք դրանք մեր աշխատանքում: Դա անհրաժեշտ է աշակերտներին ավելի լավ օգնելու և մեր ծրագրերի առավել արդյունավետ զարգացման համար: Սովորողների մասին անհրաժեշտ տեղեկույթը հավաքելու համար նախնական թեստավորում եմ անցկացնում, որը բացահայտում է աշակերտների, գիտելիքների և հմտությունների նվազագույն մակարդակը:

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ

այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը:

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերտի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը:

Ակտիվ ուսուցման մեթոդները – մեթոդներ են, որոնք նպաստում են ուսանողների ճանաչողական գործունեությունը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: ԱՈՒՄ-ը բնութագրվում է ուսանողների ակտիվության բարձր մակարդակով: Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից: ԱՈՒՄ-ը – մեթոդներ են, որոնք մատուցվող կրթական նյութերի յուրացման գործընթացում ապահովում են ուսանողների ակտիվությունը, մտածական և պրակտիկ գործունեության բազմազանությունը: ՈՒԱՄ-ը հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, ուսանողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: ՈՒԱՄ-ի կրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա: Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- Համագործակցային
- Համադասարանային
- Խճանկար

- Աշակերտների դրական խթանի ձևավորում,
- Աշակերտների ճանաչողական ակտիվության բարձրացում.
- Կրթական գործընթացին Աշակերտների ակտիվ ներգրավում.
- Ինքնագործունեության խթանում,
- Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Աշակերտի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,
- Աշակերտի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում։

Ակտիվ ուսուցումը ուսուցիչների և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչները և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ։ Եթե պասիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն էր, ապա այստեղ ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են՝ սուբյեկտ սուբյեկտային փոխհարաբերություններ։ Պասիվ ուսուցումը ենթադրում է ուսուցում ավտորիտար ոճով, իսկ ակտիվ ուսուցումը ժողովրդավարական ոճով։

# ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

Մի դպրոցում, իմ դասղեկական դասարանի երեխաները՝ բացարձակ մեծամասնությունը տղաներ, ընդհանրապես անտարբեր էին սովորելու հանդեպ: Այս հանգամանքը խիստ մտահոգում էր տնօրինությանը, դասավանդող ուսուցիչներին, ինձ և ծնողներին, բայց ոչ իրենց: Կազմակերպում էի դասավանդող ուսուցիչների հետ մեթոդական քննարկումներ, հանդիպումներ ծնողների հետ, զրույցներ երեխաների հետ: Ոչ մի կերպ և ոչ մի առարկայի հանդեպ հետաքրքրություն չկար: Շուրջ երկու ամիս կիրառեցի իմ իմացած բոլոր հնարավոր մեթոդներն ու հնարները, դասավանդող ուսուցիչներով կազմեցինք թեմատիկ միավորներ, իմ դասերին թվանշանային գնահատումը փոխարինեցի միմիայն ուսուցանող գնահատմամբ, անգամ ծնողների հետ դաս սովորելու համար մրցանակներ էինք պատրաստել: Ոչ մի կերպ և ոչ մի առարկայի հանդեպ հետաքրքրություն չկար: Մի օր դասի ժամանակ հարց տվեցի ու ասացի, որ ես էլ չգիտեմ այդ հարցի պատասխանը: Հաջորդ դասին բոլորը թեմայի վերաբերյալ հնարավոր բոլոր աղբյուրներն ուսումնասիրած եկան, դասը անցավ արդյունավետ, իրենք այնքան էին բավականություն ստացել այդ դասից, որ այդուհետ նախ դաս սովորել սկսեցին, հետո հետաքրքիր հարցեր էին կազմում, որ մյուսները գտնեն պատասխանները:

## Հաջողության պատմություններ

Դասերից մեկի ժամանակ սկզբնաղբյուրի հետ աշխատող աշակերտները հատկապես ոգևորվել էին այն փաստից, որ իրենք էին հանդես գալու որպես տվյալ դեպքում վնասված սկզբնաղբյուրը «փրկողներ»: Դասարանը բաժանված էր խմբերի, որոնցում աշակերտները հանդես էին գալիս որպես մատենագիր վերականգնողներ, մատենագիր մեկնողներ, մատենագիր-քարտեզագիրներ և մատենագիր-ծաղկողներ: Աշակերտներին տրվել էին աշխատանքային փաթեթներ՝ վնասված սկզբնաղբյուրներ, յուրաքանչյուր խմբի համար առանձին հարցեր, հարցեր, որոնց պատասխանները պիտի փոխանցեին մյուս խմբերին: Աշխատանքի ավարտին որպես խրախուսում տրվում էր նաև ծրարված թևավոր խոսք: Առաջինն իր հանձնարարությունն ավարտած խումբն իր թևավոր խոսքը փակցնում էր թեմայի ամփոփման համար առանձնացված պաստառի վրա: Աշակերտներն այսպիսի

դեպքերում իրենց զգում են Եղիշե՝ Ավարայրի դաշտում, Ֆրանկլին՝ Սպիտակ տանը, Մահարի՝ Վանի այրվող Այգեստաններում, ԳՈՒԼԱԳ-ում, Արամ Մանուկյան՝ «Հայաստանի անկախության հռչակագիրն» ընթերցելիս: Աշակերտն իրեն կարևոր է համարում: Այսպիսի առաջադրանքները լրացուցիչ մոտիվացիա են առաջացնում, զարգացնում են հաղորդակցական հմտություններ, մղում սեփական արդյունքը ծառայեցնելու խմբի հաջողությանը:

Դասերը հաջողված են լինում, երբ «Հասարակագիտություն» առարկայի յուրաքանչյուր թեմա ներկայացվում է համապատասխան տեսանյութով, տեսաֆիլմով, գծապատկերով: Օգտագործում եմ մուլտֆիլմեր՝ նախապես մշակված առանձին հատվածներով՝ հնարավորություն տալով երեխաներին ակտիվ քննարկել և մասնակցել ամբողջ դասապրոցեսին: Դա խթանում է երեխայի հետաքրքրությունը, նրա անմիջական մասնակցությունը, օգնում է արագ և արդյունավետ յուրացնել նյութը, զարգացնում է ստեղծագործելու, ինքնուրույն մտածելու կարողությունը:

Հաշվի առնելով երեխայի ընդհանուր զարգացվածությունը՝ աշակերտին հանձնարարում եմ կազմել գծապատկեր կամ էլեկտրոնային տարբերակով ինքնուրույն գրաֆիկական պատկերներ, որոնք համապատասխանում են թեմային: Հանձնարարում եմ փնտրել, գտնել համապատասխան նկարներ, դասը ներկայացնելով սեփական/հեղինակային/ գծապատկերների, մուլտֆիլմի կամ ֆիլմի օրինակներով՝ հստակորեն ուղղորդում եմ աշակերտին, միաժամանակ տալով նրան ընտրության լայն հնարավորություն: Այս ամենը զարգացնում է երեխայի երևակայությունը, նրա համար առավելագույնս հետաքրքիր և հաճելի է դառնում դասի ամբողջ ընթացքը: Դասը հետաքրքրություն է առաջացնում նաև դասընկերների շրջանում, ձևավորում է առողջ մրցակցություն:

Դասարանում կարողանում եմ հետ մնացող աշակերտներին ներգրավել դասին: Այդ նպատակով առաջադիմող աշակերտին տալիս եմ սովորեցնող ուսուցչի դեր և դասի վերջում հարցերով ամփոփում, թե ինչ չափով ինքը կարողացավ սովորեցնել: Ամեն դասի երեխաներն աշխատում են տարբեր աշակերտների հետ:

Դեռ մանկուց սիրում էի հավաքել հայտնի նկարիչների նկարներ: Եվ ահա 10-րդ դասարանում, երբ պետք է անցնեինք «Հասարակագիտություն» առարկայի «Արվեստ»

բաժինը, մտածեցի՝ ի՞նչ անել դասն ավելի հետաքրքիր կազմակերպելու համար։ Հենց այս թեմայի շրջանակներում ինձ օգնության եկան քաղցրավենիքի տուփից կտրատված հայտնի նկարիչների, քանդակագործների, ինչպես նաև նրանց աշխատանքները պատկերող նկարները։ Դասի ժամանակ ես աշակերտներին բաժանեցի այդ նկարները։ Գրատախտակին գրեցի տասը հարց, որոնց աշակերտները թերթիկի վրա պետք է պատասխանեին և այն վերջում հանձնեին ինձ։ Այդ հարցերից էին, օրինակ, նշել երեք գույն, որ գերիշխում են նկարում, ի՞նչն էր տարօրինակ նկարում, ի՞նչը ինձ ամենաշատը գրավեց նկարում և այլն։ Այս հնարը նպաստեց, որ աշակերտները ոչ միայն ծանոթանան արվեստի գլուխգործոցներին, այլև կատարեն մանրամասն վերլուծական աշխատանք։

Քաջալերում եմ հնչած բոլոր հարցերը, պատասխան գտնելիս ընդգրկում եմ այլ աշակերտների։ Հարցերի համար կարելի է ունենալ փակ արկղ. դա շատ արդյունավետ է, եթե խմբում կան անհամարձակ սովորողներ, ովքեր վախենում են դասարանում հարց հնչեցնել։

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինքս դասը վերլուծելուց հետո հասկացա, որ ցանկացած մեթոդ կիրառելուց առաջ պետք է հաշվի առնել, թե որքանով է դասարանը պատրաստ նման վարժությունների:

Համագործակցային ուսումնառությունը լայն տարածում ունի, տարիներ շարունակ այն կիրառվում է: Ուսունասիրությունները ցույց են տվել, որ դա իսկապես աշխատում է, այն գերազանց գործիք է:

Այլ խոսքով աշակերտները պետք է հավատան իրենց ուժերին և կառուցողական մոտեցում ցուցաբերեն ուսումնառության գործընթացին: Ճիշտ տարբերակումից է կախված անձի ձևավորումը, հասարակության մեջ անհատի սեփական անձը դրսևորելու ունակությունը:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Балаев А.А. Активные методы обучения. М., 2006.
2. Смолкин А.М. Методы активного обучения. М., 1991.
3. Анцибор М.М. Активные формы и методы обучения. Тула 2002
4. Выготский Л.С. Педагогическая психология.
5. https://hy.wikipedia.org/wiki

# Դասապլան 1

Ուսուցիչ՝ Տարոն Խաչատրյան Առարկա՝ Հայոց պատմություն
Դասարան՝IX Ամսաթիվ՝ 16.10.2023

| | |
|---|---|
| Թեմա՝ | Հայաստանի Հանրապետության խորհրդայնացում |
| Օգտագործվող նյութեր՝ | Դասագիրք, քարտեզ, նկարներ: |
| Հիմնական հասկացություններ | Խորհրդային Հայաստան, ռազմական կոմունիզմ, իշխանության մարմինների ստեղծում: |
| Դասի նպատակը՝ | Իմանան իշխանության նոր մարմինների ստեղծումը Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը: Փետրվարյանապստամբության սկիզնը Հայաստանում: Խորհրդային իշխանության ամրապնդում: |
| | Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ |
| Վերջնարդյունքները | Աշակերտը կկարողանա.<br>• Նկարագրել խորհրդայնացման գործընթացը<br>• Թվարկել իրադարձությունների ժամանակագրություն<br>• Համեմատել քաղաքական գործիչներին<br>• Վերլուծել խորհրդայնացման դերը<br>Վստահ լինելու համար, որ մենք հասել ենք վերջնարդյունքի:<br>Արժեվորել պատմական գործընթացը և խորհրդայնացման դերն ու նշանակությունը: |

| Գործողություններ (ժամ/ տևողություն) | Պլանավորած ՈւԳ ռազմավարություններ | Առանցքայինհարցեր<br>Հիմնական ստուգումներ<br>(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին) |
|---|---|---|
| Խթանում<br>10 րոպե | Գրատախտակին գրել ԽՍՀՄ և կազմակերպել մտագրոհ։<br>Դասախոսել տարեթվերի մասին։ | Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>- Թվարկել իշխանության մարմինները։<br>- Ե՞րբ խորհրդայնացվեց Հայաստանը։<br>- Իմանա փետրվարյան ապստամբությունը։<br>- Արժեվորել ժամանակաշրջանը, վերլուծել և արդիականացնել։ |
| Իմաստի ընկալում<br>20 րոպե | Դասարանը բաժանել խմբերի և տալ համապատասխան հարցաշար։<br>Գրատախտակին լրացնել գծագիր։ | |
| Կշռադատում<br>10 րոպե | Ամբողջացնում է ուսուցիչը դասը, արժեվորում է ժամանակաշրջանը, տալիս է հիմնական գաղափարը և վերլուծում է դասը։ | |
| Գնահատում<br>3 րոպե | Միավորային գնահատում | |
| Տնային հանձնարարություն<br>2 րոպե | Գրավոր պատասխանել 2-րդ և 3-րդ հարցերին։ | |

Դասապլան 2

Ուսուցիչ՝ Տարոն Խաչատրյան Առարկա՝ Հայոց պատմություն
Դասարան՝IX Ամսաթիվ՝ 19.**10.2023**

| | |
|---|---|
| Թեմա՝ | Խորհրդային վարչակազմի հաստատումը և Փետրվարյան ապստամբություն |
| Օգտագործվող նյութեր՝ | Դասագիրք, քարտեզ, նկարներ: |
| Հիմնական հասկացություններ | Խորհրդային Հայաստան, ռազմական կոմունիզմ, իշխանության մարմինների ստեղծում: |
| Դասի նպատակը՝ | Իմանան իշխանության նոր մարմինների ստեղծումը Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը: Փետրվարյանապստամբության սկիզնը Հայաստանում: Խորհրդային իշխանության ամրապնդում: |
| | Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ |
| Վերջնարդյունքները | Աշակերտը կկարողանա.<br>• Նկարագրել Փետրվարյան ապստամբության սկիզբը<br>• Թվարկել իրադարձությունների ժամանակագրություն<br>• Համեմատել քաղաքական գործիչներին<br>• Վերլուծել խորհրդայնացման դերը<br>Վստահ լինելու համար, որ մենք հասել ենք վերջնարդյունքի:<br>Արժեվորել պատմական գործընթացը և խորհրդայնացման դերն ու նշանակությունը: |

| Գործողություններ (ժամ/ տևողություն) | Պլանավորած ՈւԳ ռազմավարություններ | Առանցքայինհարցեր<br>Հիմնական ստուգումներ<br>(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին) |
|---|---|---|
| Խթանում<br>10 րոպե | Գրատախտակին գրել Փետրվարյան ապստամբություն և կազմակերպել մտագրոհ։<br>Դասախոսել տարեթվերի մասին։ | Առարկայի չափորոշչային նվազագույն պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝<br>- Թվարկել ապստամբության պատճառները։<br>- Ե՞րբ խորհրդայնացվեց Հայաստանը։<br>- Իմանա փետրվարյան ապստամբությունը։<br>- Արժեվորել ժամանակաշրջանը, վերլուծել և արդիականացնել։ |
| Իմաստի ընկալում<br>20 րոպե | Դասարանը բաժանել խմբերի և տալ համապատասխան հարցաշար։<br>Գրատախտակին լրացնել գծագիր։ | |
| Կշռադատում<br>10 րոպե | Ամբողջացնում է ուսուցիչը դասը, արժեվորում է ժամանակաշրջանը, տալիս է հիմնական գաղափարը և վերլուծում է դասը։ | |
| Գնահատում<br>3 րոպե | Միավորային գնահատում | |
| Տնային հանձնարարություն<br>2 րոպե | Գրավոր պատասխանել 2-րդ և 3-րդ հարցերին։ | |